«Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Խալաջի բազալտի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

14.02.2022թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Աճանանի գյուղապետարանի վարչական շենքում 2022 թվականի փետրվարի 8-ին, ժամը 15:00-ին տեղի ունեցավ «Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Խալաջի բազալտի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերության, Կապանի համայնքապետարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թվականի հունվարի 19-ի թիվ 8 համարում, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջերի հայտարարությունների բաժնում (www.env.am, www.kapan.am):

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյանին:

Զեկույց (Հովիկ Մեսրոպյան)- Հարգելի հանրային քննարկման մասնակիցներ, օրենքով սահմանված կարգով մենք ծանուցել ենք Կապանի համայնքապետարանին, որն էլ իր հերթին տեղեկացրել է Աճանան բնակավայրին քննարկման վերաբերյալ: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին է ներկայացվել ՀՀ Սյունիքի մարզի Խալաջի բազալտի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: Համայնքը տվել է իր համաձայնությունը տվյալ տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ իրականացնելու համար: Քանի որ գործունեությունը դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի, ապա

քննարկումները իրականացվելու են երկու փուլով՝ նախնական և հիմնական: Այս պահին մենք նախնական փուլում ենք, իսկ մինչ այս եղել է 1-ին հանրային քննարկումը, համայնքը տվել է համաձայնությունը, արձանագրությունը, մասնակիցների ցանկը և տեսաձայնագրությունը փորձաքննություն իրականացնելու նպատակով: Այսօրվա՝ 2-րդ հանրային քննարկումից հետո կտրվի ձեռնարկողին տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա կկազմվի շմագ հաշվետվությունը: Կիրականացվի ևս երկու հանրային քննարկում (3-րդ, 4-րդ), որից հետո օրենքի տարրին համապատասխան կտրվի պետական փորձաքննական եզրակացություն: Հայտի վերաբերյալ նշեմ, որ փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության բոլոր ստորաբաժանումները՝ անտառային, վտանգավոր նյութերի և թափոնների, ջրային ռեսուրսների քաղաքական վարչությունները, հիդրոերևույթաբանական կայանը և այլն: Բացի ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից փորձաքննությանը մասնակցել են նաև արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև կադաստրի կոմիտեն և Սյունիքի մարզպետարանը: Բոլոր կարծիքները, դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել և հայտը ուղարկվել է ձեռնարկողին երկու անգամ լրամշակման: Բնապահպանական մասով նշեմ, որ հանքի ծառայման ժամկետը 20 տարի է, ամենամեծ երկարությունը՝ 200 մ, լայնությունը՝ 85 մ, առավելագույն խորությունը՝ 50 մ, իսկ տարեկան արտադրողականությունը՝ 15000 մ^3 : Հայտում ներառված են բնապահպանական ազդեցությունների նվազեցմանն ուղղված այն միջոցառումները, որոնց կիրառման ընթացքում գրեթե զրոյանալու են շրջակա միջավայրի վրա հասցվելիք վնասները: Օրինակ՝ վառելիքը պետք է լիցքավորվի ոչ թե տարածքում, այլ հատուկ կետերում, որպեսզի չթափվի ու հողի աղտոտվածություն տեղի չունենա: Այլ օրինակներ՝ մեքենաների կայանման համար նախատեսված տարածքի բետոնապատում, հնամաշ մասերի, դետալների հավաքում հատկացված առանձին տեղերում և հանձնում որպես մետաղական ջարդոն, հնամաշ անվադողերի տեղափոխում սահմանապահ զորամասեր, արտադրվող թունավոր նյութերի դեմ ֆիլտրերի տեղադրում: Հայտում ներկայացվել է, որ տարվա չոր և շոգ եղանակին օգտագործվելու են ջրցան մեքենաներ, որպեսզի փոշի չառաջանա: Կեղտաջրերը կհավաքվեն հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է պայմանագրային հիմունքներով՝ լիցենզավորում ունեցող ծառայությունների կողմից: Հետագայում կիրականացվի արտադրական հրապարակի բարեկարգում, կանաչապատում և այլն: Եթե լինի թույլտվություն և աշխատանքները սկսվեն, ապա հայտում ներկայացված այդ հողաբուսաշերտը կլցվի առանձին հատուկ հատկացված վայր, կմնա այնտեղ մինչև հանքարդյունաբերական աշխատանքների ավարտը և կիրականացվի ռեկուլտիվացիա: Յուրաքանչյուր հանքարդյունահանման ավարտից հետո ընկերությունը պարտավոր է տարածքը վերականգնելու՝ բերելու իր նախկին տեսքին: Նախկինում եթե ընկերությունները աշխատանքների ավարտից հետո ռեկուլտիվացիա չէին իրականացնում, ապա այժմ այն պարտադիր է, նոր օրենքի պահանջ է: Աշխատանքերի առաջին իսկ օրվանից սկսած ընկերությունը բյուջե է փոխանցում ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ գումարը, որպեսզի 20 տարին լրանալու պես ռեկուլտիվացիայի համար պահանջվող գումարը արդեն իսկ բյուջեով նախատեսված լինի:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ գլխավոր ճարտարագետ՝ Սերգեյ Առստամյանին:

Զեկույց (Սերգեյ Առստամյան)- Հարգելի հանրային լսման մասնակիցներ, մեր ընկերությունը պատրաստ է այդ աշխատանքները իրականացնել այնպես, ինչպես պահանջում է օրենքը: Այդ աշխատանքները իրականացվելու են հորատասեպային ձևով, այսինքն պայթեցման աշխատանքներ չեն լինելու: Էքսկավատոր, բուլդոզեր, նման մեխանիզմներ են աշխատելու և աշխատանքները կկատարվեն 5 մ լայնությունով, 2,5 մ բարձրությունով, որպեսզի փլուզումներ չառաջանան: Ինչպես նշվեց, պետք է ջրվի, կանաչ գոտի ստեղծվի: Հնարավոր է, որ մեխանիզմի աշխատանքներից աղմուկ լինի, ընկերությունը կձեռնարկի այդ աղմուկի դեմ փակել ձայնախլացուցիչ շերտերով: Աշխատանքը լինելու է մեկ հերթափոխով՝ 8 ժամյա, իսկ հանքի ծառայման ժամկետը՝ 20 տարի:

Հարց (Սոնա Հովհաննիսյան-Աճանանի միջնակարգ դպրոցի տնօրեն)- Քանի որ դպրոցը համարվում է հենց առաջին ազդակիր օբյեկտը, ես մտահոգված եմ դրանով, որովհետև այնտեղ դասապրոցես է իրականանում: Դուք խոսեցիք փոշու մասին, խոսեցիք ձայնի մասին, այդքանի հետ գումարած նաև դպրոցի ամրության հարցը, քանզի այն անմիջապես դպրոցի ներքևում է: Ինչպես է դա լինելու, ինչպես է ապահովվելու դպրոցի անվտանգությունը, արդյո՞ք մեկ օր մենք նույնպես չենք հայտնվի ներքևի ճանապարհին: Ինձ շատ մտահոգում է դասապրոցեսի վրա ազդող աղմուկը և փոշին:

Պատասխան (Սերգեյ Առստամյան)- Ընկերությունը չի որոշում, թե դեցիբելը ինչքան լինի, փոշին ինչքան լինի: Դրա համար կան համապատասխան ծառայություններ, նրանք դա կուսումնասիրեն: Սա դեռ երկրորդ հանրային լսումն է ու դեռ շարունակական ևս երկու լսում կլինի: Ձեր հարցերը գրանցվում են և կստանան պատասխաններ:

Հարց (Սոնա Հովհաննիսյան)- Մինչ աշխատանքները սկսելն եք ապահովելու այս ամեն մի մտահոգող հարցի պատասխանը, թե՞ աշխատանքները սկսելու ընթացքում է որոշվելու՝ ի՞նչն է վնաս:

Պատասխան (Սերգեյ Առստամյան)- Ամեն ինչ հաշվի կառնվի, դեռ լսումներ կունենանք և Ձեր հարցերին համապատասխան լուծումներ կտրվեն:

Լրացում (Գոռ Թադևոսյան)- Դեռևս առաջին լսման ժամանակ այս հարցերը հնչեցվել են, մենք նույնպես բարձրաձայնել ենք կապված աղմուկի, փոշու, բնակելի և ոչ բնակելի հասարակական շենքերի անտանգության հետ: Այդ ժամանակ կար հարց նույնիսկ, թե գիշերային ժամերին աշխատելու են, թե ոչ: Ընկերությունը պատասխանեց, որ չի աշխատելու: Փոշու հետ կապված էլ հայտում ներկայացված են միջոցառումներ, որպեսզի փոշի չառաջանա: Երրորդ մտահոգիչ հարցը շենքերին հասցվող հնարավոր վնասի մասին է, ինչին ի պատասխան ընկերությունը ասեց, որ պայթեցումներ չեն լինելու, տեխնիկայով է քարը կտրվելու: Որպես համայնքի ներկայացուցիչ ևս մեկ դիտողություն եմ ուզում նշել հանքի հետ կապված՝ ցանկացած օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ բնականաբար համապատասխան նորմատիվ իրավական ակտերի և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի հիման վրա է կազմվում: Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 54-րդ հոդվածի, որը սահմանում

է օգտակար հանածոյի պայմանագրերի կնքումը և ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին ՀՀ 2012թ" մարտի 22-ի 437-Ն որոշման օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը պետք է նախատեսի դրույթներ՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ: Հայտում չտեսանք համայնքի հանդեպ ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորությունների վերաբերյալ կետ: Խնդրում եմ հաջորդ անգամ սա ներառել: Մենք առաջարկում ենք ֆիքսել և ապագայում օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի կնքման ժամանակ՝ որպես համայնքի հանդեպ ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորություն սահմանել տարեկան 20 միլիոն դրամ: Սա համայքի առաջարկությունն է, որ համայնքն էլ կարողանա համապատասխան ծրագրեր իրականացնել նշված տարածաշրջանում: Սա համայնքապետարանի մոտեցումն է այս հարցի հետ կապված:

Հարց (Հովիկ Մեսրոպյան)- Առաջին լսման ժամանակ համայնքի հետ որևէ սոցիալական պայմանավորվածություն չի՞ եղել:

Պատասխան (Գոռ Թադևոսյան)- Ոչ:

Լրացում (Հովիկ Մեսրոպյան)- Եթե չնախատեսվի, մենք հայտը ներկայացնում ենք լրամշակման հիմնական փուլում: Արդեն երրորդ հանրային քննարկման հիման վրա կտրվի տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա կկազմվի շմագ հաշվետվություն: Երրորդ հանրային քննարկումը իրականացնելու ընթացքում դուք կներկայացնենք համայնքին սոցիալական օգնություն ցուցաբերելու ծրագիրը՝ որոշելով համայնքապետարանի և վարչական ղեկավարի հետ միասին:

Հարց (Սոնա Հովհաննիսյան)- Արդյո՞ք դպրոցն էլ նկատի ունեք:

Պատասխան (Գոռ Թադևոսյան)- Ինչը, որ համայնքի լիազորությունների շրջանակներում է, աշակերտները այս տարածքում են ապրում, բնականաբար դա իրենց էլ է վերաբերվում: Խոսքը սոցիալ-տնտեսական պարտավորությունների մասին է և դա ամենևին չի նշանակում, որ Ձեր մյուս մտահոգող հարցերին չենք անդրադառնալու: Այսուհետ կառավարության համապատասխան որոշումով՝ ընդերքօգտագործողը պետք է նշի իր սոցիալական ծրագրի չափը և ժամկետները: Մենք առաջարկում ենք, որ արդեն երրորդ հանրային քննարկման ժամանակ ընկերությունը իմանա համայնքի կարծիքը այս հարցի վերաբերյալ:

Լրացում (Հովիկ Մեսրոպյան)- Հատկապես վերջին երկու տարիների ընթացքում փորձաքննական կենտրոնից ինչ եզրակացություն, որ դուրս է գալիս՝ պարտադիր պահանջի կետեր կան, որ մենք դնում ենք: Այդ կետերից մեկը վերաբերվում է համայնքի սոցիալ-տնտեսական օգնությանը: Մենք պարտադիր նշելու ենք և պահանջ ենք ներկայացնելու ընկերությանը, որպեսզի համայնքին ցուցաբերվի սոցիալական օգնություն՝ անկախ նրանից, թե հայտում գրված կլինի, թե չի լինի:

Հարց (Թադևոս Նավասարդյան- Աճանանի բնակիչ)- Տարիներ առաջ, երբ ավագանի էի, Ձեր ընկերությունը այստեղ խմելու ջուր էր անցկացնում և նմանատիպ ժողով արվել էր նաև այն ժամանակ ու հարցը մնաց փակուղում: Մարդիկ այստեղ տարբեր տեղերից եկել են և այս գյուղում գտել իրենց վերջին ապաստանը: Ուրիշ տեղ չկար հանք բացելո՞ւ: Ձեր կողմից հատկացվելիք գումարով ավելի լավ է բնակարաններ գնեք, բնակչությանը վտարեք

այստեղից, հետո ուզում եք հանք բացեք, ուզում եք մարզադաշտ: Մի կողմից կորոնավիրուսը, մի կողմից պատերազմը, մյուս կողմից Քաջարանի և Կապանի կոմբինատները: Իմ անունից ասում եմ կամ տալու եք փոխհատուցում և ես իմ բնակարանից կգնամ, կարտագաղթվեմ Հայաստանից կամ էլ հերիք է, այդ հանքը չի բացվելու, վերջ:

Լրացում (Գոռ Թադևոսյան)- Եթե բազալտի հանքի հետ կապված մտահոգող հարցեր կան, ապա խնդրում եմ դրանք կոնկրետ թեմայի շրջանակներում:

Հարց (Կարեն Բաբայան- Աճանանի բնակիչ)- Հենց դպրոցի ներքևի հատվածում պիտի հանքը բացվի՞: Ավելի խոշոր տարբերակով, որ բարձրանում ես գյուղը այդ դիրքի հատվածում է, մյուսը՝ ձորի հատվածում:

Պատասխան (Սերգեյ Առստամյան)- Պատճառը այն է, որ այդ տարածքն է գրանցված ընդերքում:

Հարց (Հրաչ Կարապետյան- Աճանանի բնակիչ) Խալաջում ապրում է 70 տնտեսություն: Փաստորեն դուք հաշվի չեք առնում այդ 70 ընտանիքի կարծիքը: Եթե յուրաքանչյուրիդ տնից 30-60 մ հեռավորության վրա բուլդոզեր աշխատացնեն, դուք կհամաձայնվե՞ք: Ես 2008 թվականից այստեղ եմ ապրում, սկզբից բերք էի վերցնում, իսկ վերջին երեք տարում բերք չեմ տեսել, մեղր չեմ վերցրել: Ինչո՞ւ եք հանքը հենց այստեղ բացում: Մենք համաձայն չեք, թողեք հանգիստ ապրենք:

Հարց (Լիդա Դադայան- Աճանանի բնակիչ)- 34 տարի է այստեղ եմ ապրում: 1988 թվականից այստեղ ով եկել, մեզ վատություն է արել: Պոչամբարի օդը մենք ենք շնչում: Ամռան ամենասիրուն պահին իմ այգին չորանում է: Դուք քար եք հանում ու այդ փոշին մի՞թե մեզ չի հասնելու: Մենք գալիս ենք Ձեր տան տակը քանդո՞ւմ: Ուրիշ տեղ չկա՞ր հանք բացելու: Հանքը առանց պայթեցումների գործ են կատարում, ի՞նչ է:

Լրացում (Հովիկ Մեսրոպյան)- Հանքը առանց պայթեցման աշխատանքների է իրականացվելու: Պայթեցում չկա: Եթե պայթեցում լիներ, մենք ՊՆ նախարարություն պիտի ուղարկեինք կարծիք, ստանայինք պատասխաններ, թե ինչ նյութեր է օգտագործվելու, պիտի պահպանվեր 200-300 մ սանիտարապաշտպանիչ գոտին: Բայց այս պարագայում հանքը առանց պայթեցումների է աշխատելու: Իսկ, թե ինչու է այս տարածքում բացվում, որովհետև պաշարները հաստատվել են այստեղ և այստեղ են իրականացվել երկրաբանական ուսումնասիրություններ: Այս տարածքն է գրանցված ընդերքում, որ պաշար ունի: Միգուցե այլ տեղ ավելի մեծ պաշար կա, բայց այն ուսումնասիրված չէ և պաշարը հաստատված չէ:

Լրացում (Գոռ Թադևոսյան)- Համայնքը չի որոշում: Հանրային լսումները իրականացվում են, որպեսզի լսենք հանրության կարծիքը: Այս քննարկումները հենց նրա համար են, որ բարձրացվեն բոլոր խնդիրները և պահանջենք ընկերությանը, որպեսզի խնդիրները լուծի կամ նվազագույնի հասցնի: Եվ ինչ եղանակով էլ, որ որոշվի հանքը շահագործվի, որպես համայնքի ներկայացուցիչ երաշխավորում եմ, որ մենք հետևողական ենք լինելու, որ պահպանվեն բոլոր բնապահպանական նորմերը և այն պահանջները, որ դրված են լինելու ընկերության առջև: Առաջին պահանջատերը մենք ենք լինելու՝ համայնքը:

Հարց (Գառնիկ Սահակյան- Աճանանի բնակիչ)- Ինչպես այն ժամանակ ջրի հարցը մնաց, նույնն էլ սա է, անհնար է առանց պայթեցման: Վերջին երկրաշարժի ժամանակ տները լրիվ ճաքեր են տվել:

Լրացում (Հրաչ Կարապետյան- Աճանանի բնակիչ)- Մեզ սոցիալական օգնություն պետք չի, մեզ պետք է, որ հանքը չլինի:

Հարց (Ալեն Բաղդասարյան- Աճանանի բնակիչ)- Տեխնիկա աշխատելու է չէ՞, այդ դեպքում դիզվառելիքից թունավոր ծուխ է արտանետվելու: Ես ինքս հանքի աշխատող եմ, աշխատանքից հետո պետք է գամ ու նորից ծուխ շնչեմ՝ մաքուր օդի փոխարեն:

Լրացում (Թադևոս Նավասարդյան- Աճանանի բնակիչ)- Մեզ ոչինչ պետք չէ, հանք բացելու նպատակով թող ոչ մի կազմակերպություն Աճանան համայնք չգա: Ընդերքը ժողովրդինն է, ոչ ոք չի կարող ստիպել:

Ամփոփում (Գոռ Թադևոսյան)- Հարգելի մասնակիցներ, բոլորի առաջարկները և կարծիքները հաշվի կառնվեն և կարձանագրվեն: Շնորհակալություն եմ հայտնում բոլորին մասնակցության համար:

<u>Հանրային քննարկման պատասխանատու՝</u>
Կապան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

<u>Ձեռնարկող՝</u>
«Կապանի ՃՇՇ» ՍՊԸ տնօրեն **Արարատ Կարապետյան**

<u>Հանրային քննարկման վարող՝</u>
Կապան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

<u>Հանրային քննարկման արձանագրող՝</u>
Կապանի համայնքապետարանի
գյուղ. և հողօգտ. բաժնի առաջատար մասնագետ **Արմինե Սահակյան**